

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՈՒԱՅ ՈՒՒՆ

Ստիքատեսից սկսած անդադար հրաւեր է կարգացում, որ մտրգս քնքն իրան ճանաչէ : Բայց նորերս այս հրաւերը անհասաներից ամբողջ ազգերին էլ կարեւոր դարձաւ, երբ ազգայնութեան գիտակցութիւնը քաղաքակրթեալ երկիրներում աւելի և աւելի զօրացաւ : Ընդհանրական ոգին, հրապարակական կարծիքը մի գործիչ է դարձել մեր ժամանակուայ մէջ, և ամենայն մտրգ, որ ընդհանրութեան հետ կապուած է, այդ գործիչը պիտի ճանաչէ : Տալէյրանն ասաց մի անգամ. « Ես ճանաչում եմ մի որ, որ Վալթերից խելօք, մի որ որ Բանաստեղծականից խելօք, մի որ որ աշխարհքի բոլոր եզած եւ լինելու իմաստուններից խելօք է, — դա է հասարակական կարծիքը : » Բայց այդ կարծիքը հեշտ չէ ճանաչել. սեր է դորա սահմանը ժամանակի մէջ, անձանց մէջ, ոյն է դորա բովանդակութիւնը, դորա ուղղութիւնը : Հասկանալի է, որ դա վերին ատիճան երեբուն և տատանող գաղափար է, երբեմն ընդարձակ, երբեմն սուղ միայն ամբոփելով. բայց այնու ամենայնիւ մենք պէտք է դորան ճանաչենք, ասքս թէ ոչ մեր բոլոր աչխատութիւնները ընկերութեան մէջ անորոշ և ուրեմն ՚ի զուր պիտի լինին : Որչափ որ երեբուն և տատանող լինի այդ գաղափարը, դա դարձեալ որոշակի կերպով երեւում է մի ազգի բընականութեան մէջ, մի որոշեալ ժամանակուայ մէջ : Այս, մի կողմից քաղաքակրթութիւնը այնպէս հաւասարաչափ և արագ տարածում է ազգաց մէջ, որ կարծես թէ բոլոր զանազանութիւնները իրարու մէջ պիտի վերանային, բայց դարձեալ զուցէ ոչ մի ժամանակ ոգին այնչափ զանազան չի

ժ

եզել զանազան ազգաց մէջ, ինչպէս այսօր : Իւրաքանչիւր ազգ իւր աւանձնութիւն, իւր գաղափարական (իզեալ), իւր նպատակ, իւր յատուկ կեանք ունի : Եւ այդ կեանքը վերին ատիճան շարժուն է : Մի տարուայ մուտքից սկսած մինչեւ ելքը մի ազգի մէջ սրբան շարժում է ոգին, գրգռում է սիրտը, լարում է կամքը, քանի մտքեր, խորհուրդներ, գեայեմունքներ, սրբան կարօտութիւն, հոգս, խնամք, քանի զանազան ձգտումներ մտրգս զըազեցնում են : Բայց դարձեալ այսքան խառնուածքի մէջ մի կանոնաւոր կեանք, կանոնաւոր կերպարանք երեւում է, որը որ ազգի ընդհանրական ոգի անուանում ենք : Միշտ և ամենայն ազգերի մէջ որոշեալ փրայեփող Գաղափարները ընդհանրական կեանքի մէջ ցանցի պէս սրբաւում, տարածում են : Այսպէս է մի ազգի մէջ իր քաղաքական կազմըւածքը, իր օրէնքները, իր հիմնարկութիւնները. իւրաքանչիւր մտրգ այդ գաղափարով սննդուած իր գործքերի մէջ էլ երեւցնում է ժամանակուայ այդ յատուկութիւնը : Այսպիսի ժամանակները ճնում են բանաստեղծներ, փիլիսոփայներ, որոնք միայն այն են մտածում, ինչ որ նորա իւրեանց ազգի հետ ՚ի միասին մտածել կարող են, որոնք ընդհանրական ոգւոյ ճշմարիտ ներկայացուցիչ են հանդիսանում, բայց ՚ի հարկէ ոգին աւելի մեկին և աւելի պարզ ներկայացնելով, քան թէ ամբողջի գիտակցութեան մէջ յայտնում է :

Թէ ես մեր ազգի ընդհանրական ոգին ներկայացնելու պիտի դժուարանամ, հասկանալի է նախ այն պատճառաւ, որ ոչ մեր փրայեփող Գաղափարները պարզ յայտնի են, ոչ էլ բուն ազգային բանաստեղծներ կամ փիլիսոփայներ ունենք, որոնց լատերի լու-

սով գէթ կարողանայինք այս դժուար ճանապարհը մտնել, և երկրորդ խընդիրը աւելի կնճռոտ է, քան թէ հարեւանցի երեւալ կարող է, եթէ ուշադրութիւն դարձնենք դորա բազադութեան վրայ, ինչպէս հետեւեալ օրինակները պիտի ցոյց տան :

Մի ազգի հոգին հասկանալու համար գուցէ նախ և առաջ պէտք է իմանալ, թէ նա այս ինչ ժամանակում ինչ գաղափարական է կազմել մարդկային կատարելութեանց մասին : Մարդու վրայ ունեցած գաղափարականը ուրիշ էր Հոմերոսի ժամանակ, ուրիշ էր Պտղիկեանի գաղափարականն, ուրիշ էր Հռոմէացիները, ուրիշ էր միջնադարեան ասպետները, մէկ խօսքով ամենայն ժամանակ ուրիշ կրթութիւն, ուրիշ հոգի է ունեցել : Այդպէս պէտք է ցոյց տայինք և մեր ազգի այժմեան գաղափարականը : Այժմեանը — բայց գուցէ մենք ոչ թէ մէկ, այլ շատ տեսակներ ունենք՝ մեր բազմակտոր կեանքի համաձայն, որ կարծես թէ երբէք և ոչ մի տեղ կատարելութեամբ զարգանալու բախող չէ գրտնում. բայց այդ էլ հետաքրքիր յատկանիշ կր լինէր մեր ազգի համար, թէ զարձեալ անհանգիստ ձգտում է մըթութեան մէջ, բայց իր խաղաղութիւնը դեռ չէ գտել :

Ուրիշ տեսակ խնդիրներ կառաջանան, եթէ մտածենք թէ զանազան ժամանակներին՝ մարդկային ոգու զանազան գործողութիւնքը՝ աւելի աշտուժութիւն են ունեցել. մի ժամանակ մարդիկ աւելի զգայմանց ենթակայ են եղել, միւս անգամ աւելի երեւակայութեան փոթորիկի մէջ են եղել, կամ թէ չէ երբեմն կամքի արթնութիւն, գործունէութիւն, եռանդ են ցոյց տուել, իսկ երբեմն սառնութեամբ խորհրդածութիւնք են արել

աշխարհքիս վախճանական խնդիրներ մասին, և վերջապէս երբեմն էլ որոնել են հաստատ և սարգ մտածելու եղանակը. և այսպէս ամենայն ժամանակ առանձին կերպարանք է ստացել :

Մինչև անգամ խնդիրը աւելի կարելի է մասնաւորել և ցոյց տալ, թէ ոչ միայն հոգեկան պէտքէս գործողութիւնք, այլ և նոյն իսկ գործողութեանց կերպն ու եղանակը զանազան ազգաց մէջ զանազան ժամանակներում, զանազան են եղել : Չոր օր. քանի որ մարդկութիւնը զարգայել է, այնքան ազգաց մէջ մտածելու արագութիւնը, ներքին կենաց արագութիւնը փոփոխել է : Առաջ աւելի դանդաղ, այժմ աւելի ձեպով է կատարւում : Մեր գրաբարը աւելի հարուստ և ճոխ ձեւեր ունի, բայց աւելի լայն և ընդարձակ է շարժում՝ իր մտքերը յայտնելու մէջ, քան թէ աշխարհաբարը, որ աւելի սարգ ձեւեր ունի, բայց և աւելի ընդունակ է խիտ մտքեր բովանդակել իր պորողութեան մէջ : Եւրոպական լեզուները այդ կողմանէ մեզանից շատ հեռու են գնայել և այդ է պատճառը, որ ո՛ր որ այդ զանազանութեան վրայ ուշք չէ դարձնում, թէ գրելու մէջ և թէ խօսելու մէջ ակամայ բռնաբարում է մեր կուսական լեզուն, և անհասկանալի է դառնում բուն հայկական ականջ ունեցողին. այս ակասք ընդհանուր է մեր կրթութեամբ սերնդին : Հայն դանդաղ է մտածում, քան Եւրոպացին, որովհետեւ նորա կեանքը այնպէս բազմակողմանի և արագաշարժ չէ, այնքան կարօտութիւններ չունի, ինչքան որ արեւմուտքում նկատելի է : Չոր օրի. Եւրոպացին ամենայն առաւօտ իր լըրագիրներով աւելի քաղաքական լուրեր, ամբողջ երկրի ազգերի միջակի

մատին՝ աւելի տեղեկութիւններ է ընդունում, քան թէ Հայն մի շարժումաց կամ գուցէ մի ամուսնաց մէջ ընդունել կարող է. շատ անգամ Եւրոպային նոյնով ջրաւահանանալով՝ երկկայան թերթեր էլ է ստանում, որովհետեւ նորա մտածելու պահանջը այդքան մեծ է :

Կորձ, մենք տեսնում ենք, որ մի ազգի ընդհանրական ոգին, հրապարակական կարծիքը, տիրապետող գաղափարը ըմբռնելու համար՝ որչափ մշակուած նիւթեր պիտի ունենանք, որչափ դիտողութիւններ պիտի անենք, որ լիակատար հասկացողութիւն ստանանք: Մեր ազգի ընդհանրական ոգին հասկանալու համար եւս դեռ շատ պիտի աշխատենք, որ կարողանանք պիտանի տեղեկութիւններ ձեռք բերել: Ուստի այդ ընդարձակ հարցը ես անշուշտ պիտի մասնաւորեմ, և այն էլ միայն մեր կրթութեան վերաբերութեամբ. — Այս նկատմամբ տարակոյս չկայ, որ մեր նահապետական կեանքի պատերը բացուել են՝ արեւմտեան քաղաքակրթութիւնը ընդունելու համար: Արդեօք այս այնպիսի եղանակով կատարու՞մ է, որ մեր ազգը պիտի ձոխանայ, թէ այնպիսի եղանակով, որ իսպառ պիտի լուծուի. արդեօք արեւմտեան ոգին այն արեգակն է, որ իւր կտրուկ և ծակող ճառագայթները մեր աչքերը պիտի կուրացնեն՝ մթնացնեն, թէ իւր մեղմ ջերմութեամբ և պայծառ լուսով մեզ նոր կեանք պիտի վայելէ. այս մի մտածելու հարց է: Իրողութիւնն այս է, որ մեր նոր սերունդը, այն մինչեւ անգամ մեր հին սերունդի պաշտպանութեամբ և օժանդակութեամբ, եռանդով գիտում է այդ քաղաքակրթութեան, և ուղիղ ու կողմնակի ճանապարհներով ու եղանակներով նորա բարիքը մեր մէջ

տարածում է: Արդ չի՞ կարելի արդեօք մի քանի կէտեր գտնել, որոնք գերազանցապէս այդ շարժման մէջ գործող են հանդիսանում, որոնք ուղղակի կամ անուղղակի մեր կեանքի մէջ մուտք գտնելու վերայ են, եւ որոնք ուրեմն մեր ապագայ ընդհանրական ոգու վրայ գուցէ ազդեցութիւն պիտի ունենան: Անտարակոյս կարելի է գտնել:

Նախ և առաջ ընդհանուր խողարկութեանց մէջ երեւում է ձրգտումն՝ տիեզերքի մեքենայութիւնը գտնել, այսինքն տիեզերքի վրայ մի այնպիսի ծանօթութիւն ունենալ, ուր նախ և առաջ ամենայն բանի պատճառը՝ և հետեւանքը յայտնի դառնայ, և ապա այն օրէնքները, որոնցմով որ բոլոր երեւոյթները կառավարոււմ են: Այդ պատճառաւ բնական գիտութիւնը իր ամենայն ճիւղաւորութիւններով՝ մարդուս մտածմանց նախապատիւ առարկայ է: Այնպէս հզօր է գորա ազդեցութիւնը, որ եթէ որ և իցէ ինդիր մի ուրիշ գիտութեան մէջ անհերքելի ճշմարտութիւն ուղեւայ դառնալ, պէտք է բնագիտութեան ընթացքը բռնէ և պահպանէ:

Բնական գիտութեանց զօրութիւնը, գրաւիշ յատկութիւնը, խորին ազդեցութիւնը, ուրիշ տեսակ խողարկութեանց վրայ թափուհւոյն պէս հանդիսանալը՝ իր տեսակ տեսակ յատկութիւններով բացաւորոււմ է. նախ որ նա օրէցօր հաստատ քայլեր անելով՝ շարունակաբար և անդադար աճում, զարգանում է: Անտարակոյս այս մեծ առաւելութիւն է, որ համեմատելով ուրիշ ամենայն տեսակ գիտնական խողարկութեանց հետ՝ միայն բնագիտութիւնը ջրոյ է սալիս այդ անհերքելի յատկութիւնը, այսինքն գորա ամուսն շարունակ և հաստատալիւ է:

Երկրորդ՝ ամենայն գիտութիւն , որ փորձով է ճանաչուում՝ ճիշդ է , նա որոշ և անհերքելի է մանաւանդ , եւ թէ մի քանի բնախուզները նոյնը հաստատում են : Քայց 'ի հարկէ բնագիտութեան այս գերազանցութիւնը մեզ այնչափ մտրտեցնում է , որ մենք հետզհետէ չտրադանցութեամբ սկսել ենք ճիշտ գիտութեանց յարգը 'ի մնաս միւս գիտութեանց առաւելացնել : Որով իսպառ ճնշուում է մարդկային ոգու ձգտողութիւնը՝ ճանաչել և այն իրողութիւնը , որը որ ճիշդ խուզարկութեց ճանապարհով և անմիջնորդապէս իմանալ անկարելի է : Եւ այդպէս մարդկային գաղափարական շահերը և առհասարակ գաղափարական գիտութիւնը մնասուում է , եթէ բանի նորանից պահանջուում է այն , ինչ որ նա իր բնութեամբ տալ չի կարող :

Բնագիտութիւնները դարձեալ գերազանց են նորանով , որ նոքա մի միատեսակ արդէն երկու գար միշտ և միշտ հաստատուող և կատարելագործւող խուզարկութեան ձեւին (մեթօդին) հետեւում են : Չենք կամենում ասել իբր թէ այս տեղ նորանոր գիւտեր չեն եղած , չենք կամենում ասել թէ այս տեղ հանձարներ չեն հանդիսացել , որ նորանոր ճանապարհներ բաց անէին , բայց թէ բնագիտութեան մէջ մեծ և փոքր հանձարները մի բնթացքով են գնացել , այնպէս որ փոքր հանձարներն գործունէութիւնը ևս անհերքելի արգասիք են բերել և մասնակցել են գիտութեան յառաջդիմութեան մէջ , մինչև որ սոքա ևս զգացել են իրանց անհերքելի սլոքը , և հասկանալի է ուրեմն , որ նոր թարմ սլոքեր պիտի գրբաւէին և իրանց հոսանքի մէջ բերէին :

Այս գիտութիւններն մի երեւելի յաակութիւնը ևս այն է , որ գործնական գիտութիւններ են : Գուցէ ամէն

մէկ քայլը , որ այդ շրջանում կատարւում է , այսինքն ամեն մէկ գիւտը ցանցի պէս տարածւում է կեանքի մէջ եւ նրան փոխախտութեան է ենթարկում ; — այս մի գերազանցութիւն է , որի բարձր արժէքը դժուար թէ հեշտ լինի որոշել : Հին ժամանակներում գանդատուում էին , թէ գիտութեանց ծաղկելովը , ազգութեանց զբոլթիւնը թուլացան , անաբակցս ապագայիս համար ուրիշ յոյսեր պիտի ունենանք : Այսօր գիտութիւնները մենք սպասում ենք , որ գործնական գոլով՝ ունին ընդունակութիւն ազգային կեանքը իրօք և սրղեամբ ձուխայնել :

Սակայն այս տեղ էլ մի ակնթարթ պէտք է դադարինք և հանդիսա հոգւով մտածենք , թէ մեր ժամանակուայ գիտութեանց այս յաականիչը դարձեալ աննկատելի կերպով որչափ մեղանչել կարող է , եթէ հիմքը ընդունելուց յետոյ՝ հետեւանքի վրայ հոգւ չքաշենք : Այժմ ամենքը պահանջում են , որ գիտութիւնը ամենայն տեղ ևս իր ամենայն մասերում նոյն եղանակով գործնական լինի : Մեր ժամանակին համարեա ուշադրութիւն չեն դարձնում նորա վրայ , ինչ որ բանաստեղծը ասում , փիլիսոփան քննում է : Ի հարկէ գիտութիւնը չի կարող նոյն կերպով գործնական դառնալ , նա չի կարող փութապէս և օրէցօր գործադրուիլ , այսպէս մտածողները մոռանում են , որ մի գիտութեան արժէքը ուրիշ գիտութեան չափով չափում են : Գոքա սխալ գնահատում են գաղափարական գիտութիւնները , մինչև անգամ անարդում են , որովհետեւ նոյնանից վերստին պահանջում են այն , ինչ որ նոքա անկարող են տալ :

Այս բոլոր կատարելութիւնքը ունէի բնագիտութիւնը , այժմեան կեանք

քը ցոյց է տալիս, թէ բնագիտութիւնը հասնում է իր այդ կատարելութեանց, և գլխաւորապէս այն պատճառով, որ այդ շքանի մէջ կարելի է մի այդ տեսակ կատարելութիւնը : Բայց ինչ միջոցով է հասնում այդ կատարելութեան. աշխատանքի բաժանմանըով : Աշխատանքի բաժանմանը, այս այն սկզբունքն է, որոյ վարմանակի նշանակութիւնը Պրատոնն անգամ բով բռնել էր : Մտանանք առ այժմ, թէ ստեղծողականութեամբ առաջ եկած հեղինակութիւնը, այսինքն բարձր արուեստներից ծնած արդիւնքը, աշխատութեան բաժանումը իսպառ մերժում են. իսկ ընդհակառակն ամենայն մեքենական գործ՝ այդպիսի բաժանման կարօտութիւն ունի :

Աշխատանքի բաժանմանը, դա է մայր ամենայն կատարելութեանց մարդու ձեռքից դուրս եկած գործոց մէջ, բայց մի և նոյն ժամանակ դա է ամենամեծ վտանգ մարդկային աշխատանքի մէջ, եթէ չենք կամենալ, որ նորա մէջ մասնակցող անձը, այսինքն անձնաւորութիւնը ջնջուի, անհետանայ : Աշխատանքի բաժանմանըով յաղթութիւն է ստանում գործը, բայց յաղթում է մարդը, յաղթում է առարկան, բայց անձնաւորութիւնը մաշւում է, եթէ միւս կողմից մի հաւասարակշռութիւն կամ մի հնար, օժանդակութիւն չգտնենք ընդդիմագրելու համար :

Ո՞րն է այն օժանդակութիւնն, որ կարողանանք գործ դնել՝ հետզհետէ տարածող աշխատանքի բաժանման սկզբունքի այդպիսի միակողմանութեան դէմ :

Կեանքիս ամենայն կազմութեանց մէջ՝ ուր բաժանում կայ հետն էլ պետք է լինի Ժողովուրդն, և սա է այն ակնարկած օժանդակութիւնը :

Մի հայտք՝ ձգենք դարձեալ դիտութիւնների վրայ : Մի՞թէ կարօտութիւն չէ՞ և յոյս չպիտի դնենք, որ այնպիսի անձինք անպակաս լինին, որոնք զանազան, բաժան բաժան եղած, մասնաւոր խուզարկութիւնները, ցրուցան նկատած փաստերը՝ վերստին կարող լինին բոլորը մի ընդհանուր գաղափարով ամփոփել, որ այնպիսի անձինք անպակաս լինին, որոնք մի և նոյն ժամանակ մարդկայնութեան ամբողջութիւնը նիւթ չինեն իւրեանց հանձարամիտ աշխատութեանց համար : Եթէ լոկ միայն բնական գիտութեան մէջ մնան ամանք և այդ սահմանից չդուրս գան, այդ տեղ էլ դարձեալ ժողովուրդն սիրող ոգին կարող կը լինէր մարդիկը փրկել իրանց թերահատարութիւնից, բարձրացնել և վեհմոցընել այն գործքերով և տեղեկութիւններով, որ բնական գիտութիւնը այժմ առատութեամբ պարգեւում է : Ոչ միայն աւելի ճիշդ, ոչ միայն աւելի որոշ, այլ և աւելի վսեմ կերեւար այդ ճանապարհով ստացած մեր գաղափարը բնութեան վրայ :

Ժողովուրդն է մեր առաջին կարօտութիւնը և լրացումն — մեր երկրորդը : — Լրացումն այն մտքով, որ այսուհետեւ ոչ միայն մարմնական եւ նիւթական բնութիւնը լինի խուզարկութեան առարկայ, այլ և հօգեկան բնութիւնը : Եթէ այս երկու առարկաները միտպատիւ իշխանութիւն ընտանան, եթէ մեր միտքը հոգեկան կենաց հանգամանքների համար ևս նոյն տակունութեամբ և աշխուժութեամբ ուղղուի, ինչպէս որ արտաքին բնութեան համար մտքաւորում է, այն ժամանակ ոչինչ վնաս չի կարող յառաջանալ գիտութեան զբաղմունքներից, ինչպէս որ միակողմանի հոսանքը ամ մ' սլաւաձառում է : Ընդ-

հակառակ այն ժամանակ կը ճանաչէ-  
 ինք կեանքի մէջ ուրիշ անհերքելի հան-  
 գամանքներ. մենք չէինք կասկածիլ թէ  
 արդարեւ կան գաղափարականներ, որ  
 մեր կեանքի մէջ պարտաւոր ենք իրա-  
 գործել: Երբ գաղափարական կենաց  
 հանգամանքները գտնուին, յայտնի լի-  
 նին, իրաւունք ստանան և ճանաչուին,  
 այն ժամանակ բնաւ էլ երկիւղ չի լինիր  
 իբրեւ թէ մի ազգի կեանքի մէջ գա-  
 ղափարական շարժառիթ զօրութիւն  
 ները կը պահասին, որ այժմ դժբախ-  
 տաբար կարծես թէ թուլանալու վը-  
 րայ են: Մենք պէտք է սովորենք մեր  
 մէջ խորասուզուել հոգեկան կեանքը  
 հետախուզելու համար, հոգւոյ ըս-  
 տեղծողութեան աղբիւրները գտնե-  
 լու համար, երբ այս աղբիւրները գրտ-  
 նենք՝ միայն այն ժամանակ կ'ունե-  
 նանք և այն մթերքը, որ տեղերից որ  
 ստեղծողական ոգին բխուում է:—Գու-  
 ցէ իմ ընթերցողներից մէկը կամ մի-  
 ւոր երբեմն եւ իցէ լսել է երաժիշտ  
 Բախի կրօնական նուագերգութիւնը  
 (H—moll—Messe): Որք սիրտը այս  
 ընտիր արուեստական գործի զօրեղ  
 տպաւորութեան տակ՝ սաստիկ կեր-  
 պով չի շարժուել: Բայց շատ հասկա-  
 նալի է, որ ամենակատարեալ քիմիական  
 վերլուծութիւնը զանազան մարմիննե-  
 րի, ամենակատարեալ գիտութիւնը  
 ֆիզիոլոգիական գործողութեանց, ա-  
 մենահարուստ ժողովածուները բու-  
 սաբանական և կենդանաբանական գի-  
 տութեանց, այս բոլորը, ասում եմ, չէ-  
 ին կարող այն հոգեկան հողը պատ-  
 րաստել և կազմել, որից մի այդպիսի  
 ազնիւ արուեստական գործ կարողա-  
 նար ծլել: Դա ծագում է ուրիշ ազ-  
 բիւրներից, դա ծագում է այն զօրու-  
 թիւններից, որոնք ուրիշ շարժմունք-  
 ների արձագանք են, մէկ խօսքով ազ-  
 գային կեանքի այն գաղափարական

զօրութիւնից, որ մենք կրօն անունով  
 հասկանում ենք:

Կրօն, ՚ի հարկէ ոչ սպանող բա-  
 ռայցի մտքով, այլ կենդանացնող հո-  
 գեբուղիս մտքով:

Բայց ախտս, որ այս տեղ էլ աչ-  
 խատանքի բաժանումը իրատ խորն է  
 հեռացել և մեծամեծ վնասներ է պատ-  
 ճառուած: Ով որ բուսաբանութեան և  
 հանքաբանութեան 16 և 17 դ դարե-  
 րու պատմութիւնը աչքի տակն անց-  
 նէ, նա կը գտնէ այդ գիտութեանց  
 համար արդեամբք աշխատող անուանց  
 մէջ շատ հոգեւորականներ, քարո-  
 զիչներ պաշտօնի և յարգի մէջ, որ այ-  
 ժրմ, սակաւ է երեւում: Աշխու-  
 թիւն կը լինէր, եթէ կարճէինք, իբր  
 թէ բնական գիտութիւնը ինքն ըստ  
 ինքեան մեղաւոր է, որ գաղափարա-  
 կանութիւնը պակասում է մեր օրուայ  
 մէջ, ընդհակառակն ով որ ոչ միայն կը-  
 րօնագիտութիւն ունի, այլ գիտէ նոյն  
 պէս կրօնի ծագման պատմութիւնը,  
 նորա ներքին զարգացման պատմու-  
 թիւնը, նա կը յիշէ, թէ ինչպէս այն  
 զարմանալի Յոբայ Գբքի մէջ, ուր ա-  
 մենագիտար և ամենախորին բարոյա-  
 կան ինդիւրները կը լուծւեն, վերջին  
 երեսներում լուծւում են բնութեան  
 սքանչագործ երեւոյթների միջնորդու-  
 թեամբ: Այսպէս ևս միայն նա ճիշ-  
 մարտիւ ոգեւորած է կրօնով, ով որ  
 մի և նոյն ժամանակ հասկանում է բը-  
 նութեան հրաշալիքը:

Եթէ բնական գիտութեանց հետ  
 ՚ի միասին այն կէտի վրայ ամբառնանք  
 ուր ամբողջութիւնը ժողովուում է, որ  
 տեղից բնութեան վերոյ աւելի բարձր  
 գաղափար ենք ստանում, որ տեղից  
 հասկանում ենք ամենայն ուրեք գոր-  
 ծող, ամենայն ուրեք իշխող օրէնքնե-  
 րի ներդաշնակութիւնը, զօրութիւն  
 ների յաւիտենական փոփոխութիւնը

և ընթացքը, — այդ հանգամանքը, առ սուժեմ, մեզ կ'օժանդակէր, որ աւելի բարձր գաղտնի ստանայինք և այն բանի վրայ, որ գէր ՚ի վեր է քան ընտելանը, բարձր գաղափար — ամենայն վերջին պատճառներն վրայ : Մարդկային ոգւոյ ապագայի համար մեր յոյսը անսրահաս պիտի լինի, թէ այնպիսի նոր արգասիքներ մեզ կը պարգեւէ հետզհետէ, որ կը կտրողանան հաւասարապէս իշխել կեանքի թէ գաղափարական և թէ իրական ձեւերի վրայ :

Միտքը առանձին տեսակ միանունք է, միանգամայն տարբեր գոյով մեր մարմնի ուրիշ անդամներից, որոնք մերթ հանգստութեան մէջ են. սիրտը պէտք է անդադար գործողութեան մէջ լինի : Կէանքի առաջին բոսիկից ըսկրած մինչև ՚ի վերջինը պէտք է բաղխէ. եթէ գաղարեց բաղխել, պիտի վերջանայ ուրեմն կեանքն էլ : Կրօնը սիրտ է ազգային հոգւոյ կազմութեան մէջ : Եթէ այս սիրտը էլ չէ բաղխում, այս տեղ էլ կոխուի փտութիւն, ապականութիւն, գարշահոտութիւն :

Մեր հին առաքելական եկեղեցին պարգեւել է մեզ ոչ միայն հաւատոյ խոր արմատը, այլ և հաւատոյ ազատութիւնը, որ տեղից լոյս և ջերմութիւն հաւասար զօրութեամբ ցոլանում են : Յոյս ունենանք, որ մեր երիտասարդութիւնը նոյն ոգւով մեր գաղափարական կենաց լապտերը անկորուստ կը պահպանէ :

Մարդկային գաղափարները այն զարմանալի յատկութիւնն ունին, որ իւրաքանչիւրը, երբ միւսների հետ զուգորդուած է, զօրութիւն և կեանք է ստանում : Եթէ գաղափարների մէջ աշխատանքի բաժանմունք է երեւում, եւ մի և նոյն ժամանակ ընդհանրական ոգու մէջ բնաւ ժողովուրդն չէ

նշմարում, իրիցն սկսում է ազգային սգին սասչել, քարանայ : Թող ուրեմն աւելորդ չը համարուի այն հրուէրքը, որ դանազան գաղափարները, որոնք ազգային ոգու վրայ իշխում են, միաբանին և փոխադարձ օժանդակութիւն կեանք ստանան : Եւ նախ և առաջ հորիաւոր է, որ ազգային ոգւոյ ինքնօժանտալութիւնը աւելի և աւելի հաստատուի, այսինքն ոչ միայն ձգտի որ գիտութեամբ ճոխանայ, ոչ միայն ձգտէ, որ կեանքը զարգարէ, այլ և իր բազմաձեւ գործողութեանց համար գաղտնիարականներ եւս ճանաչէ, իր կենաց նպատակները և իր ներքին զօրութիւնները եւս ճանաչէ, որով միայն ընդունակ կը դառնայ իր ընդհանրական կեանքին վսեմ և վայելուչ կերպարանք տալ :

Մեր ժամանակուայ գիտութեան յատկանիշը մանաւանդ այն մասն է, որ աշխատում է ազգային կեանքը հետախուզելու եւ որը ձգտում է նոյն պէս իրական, գործնական լինիլ, ճիշդ և հաստատ տեղեկութիւններ հաղորդել, այսինքն վիճակագրութիւնը և ազգային փոփոխութիւնը : Գոքա աշխատում են չէ թէ առաջուայ պէս ընդհանրական կեանքի մասին անձեւ ենթադրութիւններով խօսել, հասարկորդ, թուանշանների վրայ հիմնուած փաստերով : Մեծ է դոցա ձգտողութիւնը և անդին է դոցա աշխատութիւնը, որով մենք հետզհետէ ճիշտ տեղեկութիւն ենք ստանում ազգային կեանքի վերայ : Այդ գիտութիւնները հետզհետէ կատարելագործուելով մեծ ապագայ պիտի ունենան :

Բայց այս տեղ էլ կրկնում է նոյն երեւոյթը : Այս տեղ էլ կարօտութիւն կայ ոչ միայն ժողովման, այլ և նախ եւ առաջ լրացման, — լրացման այն կողմանէ որ նոյն չափով խուզար-

կուրն հոգեկան զօրութիւնները եւս, որ բարոյական ուժերը ևս ծանօթութեան աւարկոյ դառնան :

Մի օրինակով այս ասածը բացատրենք : Վիճակագրութիւնը ու աղբաշին տնտեսութիւնը կենդանի մարդկանց մէջ զանազանանում են արգասաբեր հատակը անարդասաւոր հասակից : Մարդս, ինչպէս ասում են, մտաւորապէս 13 կամ 14 տարեկանից սկսած մինչև 55 կամ 60 տարեկան հասակը արգասաբեր է : Այս է այն ժամանակը, երբ նա աշխատել կարող է : Մանկութեան ժամանակ մարդս լոկ միայն վատնող էակ է, նոյնպէս և ծերութեան ժամանակ : Այս է վիճակագրութեան և աղբային տնտեսութեան կարծիքը, որ ՚ի հարկէ շատ կողմանէ թանկագին է մեզ . բայց այս կարծիքը մեծ պակասութիւն է ցոյց տալիս՝ մարդս լոկ միայն մի նիւթական էակ ճանաչելով, եթէ մենք հոգեկան բարոյական զօրութեանց վերայ եւս ուշք դարձնենք, մենք կը համոզուինք որ զանազանութիւնը ամենեւին այնպէս նեղ չէ, ինչպէս որ ենթադրուում է : Երեւակայեցէք ձեզ մի մանուկ, մի ծիծ ուտող մանուկ մայրական կուրծքի վրայ . աղբային տնտեսի աչքով դա լոկ միայն վատնող էակ է . դա լսփում ուտում է մօր զօրութիւնը եւ մինչև և անգամ գուցէ աւելի ուտում, քան թէ մայրը կը կարողանայ վերբստին փոխանակել, դա ուտում է, բայց տնտեսականապէս ոչինչ է արտադրում : Իսկ բարոյական կողմանէ ուժեղ արգասաբեր զօրութիւն է դա . ծրմկերը իր աչքը բաց ու խուփ է անում և ուրախ ժպտում մօր վրայ նայում է . սրչափ քաղցր է, սրչափ մաքուր եւ վսեմ է այն բաւականութիւնը, որով մայրական սիրտը լոկ միայն զգալով լըւում է : Մինչև և անգամ սրպիտի

Ֆիզիքական զօրութիւն է զարթնում մօր մէջ լոկ միայն այն ուրախական զգացումից, որ նորա և մանկան փոխադարձ սէրից բխում է :

(Շարունակելի :

Սէրբայ Մանրիւն :



ԺԱՄԱՆԱԿԱԿՐԱԿԱՆՔ

Քոլերան, որ բաւականին սարսափ եւ տագնապ տարածած էր Ասորեստանի մէջ, Գաժոսկոսէն եւ Պերութէն խաղառ անհետացած է :

— Յունաց նորընտիր Պատրիարքն ձեռնարկած է վանական ներքին բարեկարգութեան : Երիտասարդ միաբանութիւնն ձայնակից եւ աջակից է իրեն, բայց ծերունեաց կողմէն բաւականին դիմադրութիւններ կան : Կը լուրի թէ մօտ ժամանակներս ՚ի Պօլիս պիտի ուղեւորի եւ իւր պատրիարքական իրաւասութիւնն ընդարձակելու համար պիտի աշխատի . վասն զի Կիրիլոսէն զինի Յունական Միաբանութիւնն բաւական սահմանափակած է Պատրիարքի իշխանութիւնն, այնպէս որ առանց Սինոդի հաւանութեան ինքնին գործելու ամենեւին արտօնութիւն չունի :

Քաղաքացիք մեծ համակրութիւն ցոյց կը տան Նորընտիր Պատրիարքին . բայց կը պահանջեն, որ յատուկ առաջնորդ ունենան քաղաքիս մէջ, և ամեն ժամանակ ստիպուած չը լինին Վանուց Կառավարութեան դիմելու : Թէեւ դժուարին է այն պահանջն, բայց գուցէ թէ հասնին քաղաքացիք իրենց նպատակին Ռուսաց շիւպատասարանի աղբեցութեան շնորհիւ :

